ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/39 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
4	-	-	-	Չոր օդային ստերիլիզատոր Չորացման և ստերիլիզացման սարք բնական կոնվեկցիայի մեթոդով տաք օդի շրջանառությամբ, որը ապահովում է հավասարաչափ ջերմաբաշխում և կայուն աշխատանք։ Սարքը նախատեսված է լաբորատոր և բժշկական կիրառությունների համար՝ ապակյա, մետաղական և այլ ջերմադիմացկուն նյութերի ստերիլիզացման կամ չորացման նպատակով։ Սարքի ներքին ծավալը ՝ 32 լիտր։ Ներքին խցիկի չափերն են՝ նվազագույնը 400 × 320 × 250 մմ, իսկ արտաքին չափերը՝նվազագույնը 585 × 704 × 434 մմ։ Սարքի քաշը ոչ ավել քան 46 կիլոգրամ։ Ներքին մակերեսը պետք է պատրաստված է բարձրորակ չժանգոտվող պողպատից (stainless steel, mat. no. 1.4301), իսկ արտաքին մասը՝ թաղանթապատ պողպատից՝ ապահովելով ամրություն և կոռոզիայից

				պաշտպանություն: Դուռը լրիվ մեկուսացված չժանգոտվող պողպատե դուռ՝ 2 կետի կողպումով (սեղմվող կողպեքով): Սարքը պետք է աշխատի +20°C-ից մինչև +250°C ջերմաստիճանային միջակայքում: Ջերմաստիճանի կայունությունը 100°C-ում ±0.5°C, իսկ ջերմային միատարրությունը՝ ±1.2°C: Ջերմաստիճանը կառավարումը բարձր ճշգրտությամբ թվային PID կարգավորիչի միջոցով, որն ապահովում է 0.1°C լուծաչափով հսկողություն: Սարքը հագեցած է Pt100 DIN Class A տեսակի չորսալար թերմոընդունիչով՝ ջերմաստիճանի ճշգրիտ չափման համար: Սարքը պետք է համապատասխանի եվրոպական անվտանգության և որակի ստանդարտներին: Անվտանգությունը երաշխավորված է էլեկտրոնային և մեխանիկական overtemperature պաշտպանությամբ՝ համաձայն DIN 12880 Class 3.1 ստանդարտի: Կառավարման համակարգը թվային է՝ հստակ ցուցադրությամբ : «Setpoint Wait» գործառույթը թույլ է տալիս գործընթացը սկսել միայն այն դեպքում, երբ բոլոր չափման կետերը հասնում են նախանշված ջերմաստիճանի: Սարքը հագեցած է նաև թվային ժամաչափով՝ 1 րոպեից մինչև 99 ժամ 59 րոպե, ինչպես նաև ներառված տվյալների գրանցիչով (data logger), որը թույլ է տալիս արձանագրել ջերմաստիճանի ընթացքը: Տվյալների փոխանցման և մոնիտորինգի համար նախատեսված են USB և Ethernet (LAN) ինտերֆեյսներ: Ներքին խցիկում տեղադրված է մեկ ցանցաձև չժանգոտվող պողպատե դարակ, իսկ անհրաժեշտության դեպքում հնարավոր է տեղադրել մինչև 3 դարակ: Յուրաքանչյուր դարակ

				կարող է կրել մինչև 20 կգ բեռ, իսկ ընդհանուր խցիկի առավելագույն բեռնատարողությունը մինչև 60 կգ։ Սարքը աշխատում է 230 Վ լարման և 50/60 Հց հաճախականությամբ, հզորությունը մոտ 1600 Վտ է (հասանելի է նաև 115 Վ տարբերակ՝ 1600 Վտ հզորությամբ)։ Օպտիմալ աշխատանքի համար պահանջվող միջավայրի ջերմաստիճանը գտնվում է +5°C-ից մինչև +40°C միջակայքում, հարաբերական խոնավությունը՝ առավելագույնը 80%՝ առանց կոնդենսացիայի, իսկ տեղադրման առավելագույն բարձրությունը՝ մինչև 2000 մետր ծովի մակարդակից։ Մոդելը պետք է համապատասխանի CE, DIN 12880, ISO 9001, EN 61010-1 և EN 61326-1 ստանդարտներին, ինչը երաշխավորում է սարքի անվտանգ և երկարատև շահագործումը։ Սարքը լայնորեն կիրառվում է լաբորատորիաներում, բժշկական հաստատություններում և գիտահետազոտական կենտրոններում՝ ապակյա և մետաղական գործիքների ստերիլիզացման, նյութերի չորացման, ինչպես նաև տարբեր փորձարարական գործընթացների իրականացման համար։ Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, փաթեթը չվնասված և ապահովված համապատասխան պահպանման պայմաններով մատակարարման ամբողջ ընթացքում։ Մատակարարումից առաջ համաձայնացնել պատվիրատուի հետ։ Մատակարարը պետք է տեղադրի սարքը

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ЭКСТРА МОТОРС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/39 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	марка	наименование производителя	технические характеристики
4				